


Open Graph



27 p



15 MAY 2013

330 07)

16 MAY 2010

ՀՐԱՄԱՆԻԹՅՈՒՆ ՎՐԵՄԵԿԻ ԼՈՒԺՈՂԱԼՐԵՏԻ ԿԲ ԱԶԳ. ՓՈՔՐԱՄԱՆԻ-  
ԹՅՈՒՆԵՐԻ ԽՈՐՀՅԱԴԻ

№ 1

# ≡ ԾՐԱԳԻՐ ≡

Հայոց լեզվի յեվ գրականության  
Վրաստանի հայկական յերկրող  
տափանքի (7 յեվ 9-ամյա) դրա-  
ռոցների

ՎԻՃԱԿԱԿԱՆ  
ԻՆՍԻՏՈՒՏ  
ՖՈՒՆԴԱԿԱՆ  
Ակադեմիա Խոր  
СССР

91.93(07)  
Հ-89

ԹԻՖԼԻՍ  
1927

# ԼԵԶՈՒ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՎII-ԱՄՅԱԿՈՒՄ

(Մեթոդական ցուցմունքներ)

I

Լեզուն և գրականությունը կարենու տեղ են գրավում՝ նոր ծրագրների մեջ։ Նա սոսկ ծառայական դեր չի կատարում, այլ ունի նաև իր ուրույն խնդիրներ։ Գրականության ուրույն, առանձնահատուկ կողմն այն է, վոր նա հուզական ճանապարհով և հասնում կյանքի ճանաչողության, տալիս և կենդանի պատկերներ անցյալ ու ներկա կյանքից, կազմակերպում և մասնուկների—պատանիների հուզական աշխարհը, հաղորդում աշխույժ, կայտառ տրամադրություն ներգործելով նրանց զգացմունքների վրա։

Գեղարվեստական յերկի ընթերցումը ու քննական վերլուծումը դաստուի զեկավարությամբ պետք է կրթեն աշակերտների միտքը, մշակեն նրանց աշխարհայցքը պրոլետարական իդեոլոգիայի ուղղությամբ։

Այս նպատակն իրագործելու համար անհրաժեշտն, վոր զպրոցը վարժեցնի աշակերտներին ըմբռնելու վոչ միայն գրական յերկի բովանդակությունը, այլ և այն հիմնական սկզբունքը թե արվեստն ընդհանրապես և թե գրական ամեն մի յերկի, յերեսույթ մասնավորապես արդյունքն և սոցիալական պայմանների, արտացոլումն և դասակարգային ինքնագիտակցության։


Այս հիմնական սկզբունքից ել բղխում և գրականությունը հասարակագիտության հետ կապելու խնդիրը։

Ինչպես պետք է արտահայտվի այդ կապը։

Անշուշտ այդ կապը պետք է լինի բնական, որինաշափ յեվ որգանական, և վոչ բնակ շինծու, արտաքին ու պատահական, ինչպես սխալմամբ վորոշ դաստուներ կիրառում են, լեզվի գրականության դասատվությունը գարձնելով ստորագաս հասարակագիտության։

Ակներեւ ե, վոր գրական ամեն մի յերկ տվյալ դասակարգի ձգտումների, տրամադրությունների արգասիքն եւ Լուսաբանել այդ յերեսույթը, այսինքն «գրական լեզուն սոցիոլոգիայի լեզվի վերածելու համար» պետք եի նկատի ունենալ հետեյալը, նախ ամեն գեղ գրվածքի հիմնական զաղափարները, տրամադրությունները դասակարգային բնույթ ունեն։ Յերկրորդ, նյութի ընտրությունը, նրա լուսաբանությունը, իրականությունը անկողմնապահ պատկերավորելու չափը վորոշվում և գրողի գեղարվեստական պաիժիկայի դասակարգային բնույթով։ Վերջապես, գրվածքի հիմնական տիպերը այս կամ այն դասակարգի ներկայացուցիչներն են։

Այս ուղղությամբ աշխատանք կատարել կը նշանակե գրական յերկին մոտենալ սոցիոլոգիարեն՝ (մաքսիմատական մեթոդ)։ Գրականության դաստուն միայն ոգտագործելու, համակարգելու յև հասարակագիտության տեղեկությունները, նրա յեզրակացությունները դարձնելով յելակետ իր գրական պարապմունքների համար։



7675-50

Ահա այսպիս միայն պետք է հասկանալ լեզվի դասատրության կապը հասարակագիտության հետ, այսպես պետք է ընթանա գեղարվեստական դրվագների բովանդակության վերլուծությունը:

Սակայն այսքանը միայն բավական չե: Գրական գեղարվեստական յերկը լրիվ ըմբռնելու համար, անհրաժեշտ է ինկատի ունենալ նաև նրա ձեսկան կողմը. առանց ձեփ բովանդակություն զոյություն չունի, այս յերկուսը կազմում են մի միաձույլ ամբողջություն: Գեղարվեստական յերկի ամբողջությունը, հեղինակի մտահղացումը լավ ըմբռնելու համար, անհրաժեշտ է վեր հանել լուսաբանել գրվածքի պլանը, նյութը ձեսկորելու յեղանակները (քնարական, եպիքական, գրամմատիքական), զործող անձերի նկարագրության բնորոշ ձեմքը, բանառուեղծական պատկերները, հեղինակի բառապաշարը, լեզվի, վոճի առանձնահատկությունները:

Գեղարվեստական յերկի բովանդակության և ձևական արտահայտությունների հետ սերտ կապված է հեղինակի և նրա իդեոլոգիայի խնդիրը։ Սակայն ինկատի ունենալով այս կոնցենտրի աշակերտաների հասակի փոքրությունը (12-16 տ.) պետք է ընտրել թեթև նյութեր, նրանց միջոցով ծանոթացնել խոսքի նշանավոր վարպետների հետ, ինարկե փոչ վորպես մի «աստվածային եակի» «հազերժական գաղափարների» կրողի, այլ վորոշելովսայի, վորոշ գասակարգի ձգտությունների, արամազդությունների արտահայտիչ և Մեր նպատակը պետք է լինի ողցիալական, դասակարգային, կուլտական հոգեբանությունից անցնել պրոֆեսիոնալ, խմբական և ապա ինդիվիդուալ հոգեբանության։

Բացի այս հիշած մոմենտներից լեզվի և գրականության դասառութառաջ դրված են նաև մի շատ կարևոր խնդիր՝ դա լեզվի բանավոր և գրավոր ունակությունների խնդիրն են, վոր տարաբախտաբար մեր զպրոցներում տակավին կազում են, գեռ չի հասել իր ցանկալիք բարձրության: Այս աշխատանքները, իհարկ են սերտ կապված լեզվական այլ զբաղմունքների հետ, սկսվում են ու մեծ տեղ են բռնում 4 ամյակում, բայց յոթնամյակում ևս շարունակվելու յեն ավելի խոր ու լայն ծավալով: Հատուկ ուշադրություն պետք է դարձնել նաև լեզվի վոճի և դարձվածքների ուսումնասությունը, այնպես վոր յօթնամյա զպրոցն ավարտած պատանին պետք է ձեռք բերի վոչ միայն ուրիշի մտքերը բմբանելու, կարգալու կարողություն, այլ և իր մտքերը, գաղափարները, զգացմունքները սահման, կանոնավոր յել նիւթ լեզվով արտահայտելու հմտություն, թե բանավոր և թե գրավոր ձեռք:

III

Գրականության ծրագիրը, նյութերը հարմարեցնելով հասարակագիտության թեմաներին, մենք զեկավարվել ենք վոչ միայն նրանց բովանդակությամբ, այլ և նրանց գեղարվեստական արժեքով։ Գեղարվեստական հոգվածները, նյութերն ընտրելիս մենք մի կողմից ինկատի յենք ունեցել հեղափոխական գրողներին (դժբախտաբար մեր ինքնուրուցյն գրականությունն աղքատ և այդ կողմից), իրեն ժամանակակից կենցաղի, տրամադրությունների արտահայտիչների, — մյուս կողմից, մեր կյասիկ գրողների

զրվածքները, վորոնք այս կամ այն շրջանի կենցաղի, հոգեբանության լավագույն նմուշներն են: Դասատուին ե միում ընտրություն անելու, նայած խմբակի պատրաստության, առանձնահատկության, այն հաշվով, վոր հնարինի նրանց հետ շաղկապելու նաև ծրագրում մատնանշած գրական ձևերի վորոշ տարրեր:

Այս կոնցենտրում կարիք չկա պահպանելու գրողների ժամանակագրական կարգը, այդ սիստեմատիկ աշխատանքը պիտի կատարվի յերկրորդ կոնցենտրում (9 ամյակում)։ միայն անհրաժեշտ ե, վոր 7 ամյա դպրոցն ավարտած պատանին վորոշ գաղափար ունենա մեր գրականության հին ու նոր աչքի ընկնող ներկայացուցիչների մասին (Արովյան, Պոռշյան, Ռաֆֆի, Աղայան, Մուրացան, Շիրվանզադե, Թումանյան, Նար-Դոս, Փափազյան, Սունդովյան, Ավ. Բահակյան, Տերյան, Հակ. Հակոբյան Արագի. Ստ. Զորյան, Զարենց, Ծատուրյան, Կուրղինյան, Ակսել): Վ խմբակի ծրագրի հիմնական նյութը գյուղն ե. գյուղացու աշխատանքը, կենցաղը, պայքարը բնության ուժերի և իր հարատահարիչների գեմ: Ժամանակակից ու հին գյուղը, առետրական կապիտալի մուտքը:

Այս նյութերի գեղարվեստական պատկերացումը հնարավորություն և տալիս ըմբռնելու զյուղացու աշխատանքի առանձնահատկությունը և նրա ազգեցությունը զյուղացու կենցաղի, հոգեբանության վրա։ Նրա աշխատանքի այս յուրահատակ դրությունը, ըստ մեծի մասամբ կապված բնության ուժերին, զնումների կամ կապակցության վրա, գցում՝ նրան սնապաշտությունների, սին համատուիրների գիրկոր («Լոռեսի Սաբոն»)։

Առանձին ուշադրության պետք է առնել այն գերը, վոր կատարում է կոլեկտիվ աշխատանքը գյուղական միջավայրում, նա ենդաշըստ է գյուղացու մտածողությունը և խթան հանդիսանում նոր ստեղծագործ ձնաբարության:

Ժամանակակից գյուղն անցնելիս պետք է հենվել աշակերտների ձեռք բերած տեղեկությունների վրա։ Այսպիսի մոտեցումը վոչ միայն նպաստում է զեղարքեատական գրածքի հաջող ըմբռնման այլ և պարզորեն ցուցահանում է զեղարքեատի կազմակերպչական, սինթեթիկ դերը։

Հին գյուղին վերաբերող գեղարվեստական կարները, պատմվածքները զարթեցնում են հետաքրքրություն զեպի անցյալի պատկերները. Նրանց նպատակը չե, ինարկե, պատմական տեղեկություններ, գիտելիքներ հաղորդել այդ աշխատանքը կատարվում է հասարակազիտության դասերին, այլ հաղորդել աշակելուներին վարոշ հույզեր, ապրումներ, տրամադրություններ եպոխայի վերաբերյալ: Այսպիսի տրամադրություններով տոգորված աշակերտը նաև հոգեբաննորեն արդարացնում ու բնական և համարում վոչ միայն հեղափոխական շարժումները, ընդվզումները, այլև անհատական վրեժիքներությունը («Քյուրք Զասրմի պատմությունը»):

Վերջին թեման (առևտրական կապիտալի մուտքը) անցնելիս բացի հիշած հոգվածներից կարելի յէ ոգտագործել նաև մեր գրողների այն գրքածքները, վորոնք պարզ ցուցադրում են ցյուղացու գրության եվոլյուցիան փողի, դրամի շրջանառության ազգեցության տակ («Քեթիուզանները»)։ Ա-

բավան, «Հայ զբականություն» Սուրբաթյանի, Ա. հատոր, Մուբացանի «Առաքյալը», Աղայան՝ «Բաժանություն», Հ. Թումանյան՝ «Գիքորը»): Այսուղղությամբ հարուստ նյութ և պարունակում «Կարմիր Արե» V տ. նոր հրատարակությունը (Ա. Հակոբյան):

ՎI խմբակի հիմնական նյութը քաղաքն և, կապիտալիզմի շրջանը, բանվորի աշխատանքը, կենցաղը, պայքարը, քաղաքի և գյուղի կազմը ու գյուղի մեքենայացումը: Մատնանշած գեղարվեստական հոդվածների մեջ քաղաքը ցուցադրվում է վոչ միայն փորպես կապիտալիզմի հակասությունների վայր, այլ և մի կենտրոն, ուր զարբնվում է բանվոր դասակարգի միտքն ու կամքը նոր կյանք ստեղծելու համար («Քաղաքը» Գուցեիչի):

Դասատուն լայնորեն ոգտագործելու յև աշակերտների ունեցած տեղեկությունները ժամանակակից քաղաքի մասին, ինքնուրույն աշխատանքներ տալով նրանց: Նույնպիսի աշխատանքներ պիտի կատարել նաև բանվորի աշխատանքն ու կենցաղը բնութագրելիս: Այսուել կարեոր և հակադրել բանվորի հին ու նոր վիճակը, նիշել նրա նոր ապրումներն ու ձգտումները: Այս նպատակի համար կարեոր և վարեցնել աշակերտներին ինքնուրույնութեն նյութեր հավաքելու զբքերից ու պարբերական հրատարակություններից:

Հեղափոխական շարժումների մեջ Հոկտեմբերը առանձնահատուկ տեղ է գրավում իրեն ամենացայտունն ու հաղթականն: Այս նյութի հետ շաղկապահ և Լենինի անձնավորությունը (Զարենց «Լենին ու Ալին»), վորից պարզ յերեւմ և թե ինչ նշանակություն ուներ Լենինը նաև ճնշված ժողովությունների համար:

Այսուհետև գյուղի և քաղաքի փոխարարերության խնդիրն է զբած: Այսուղի գյուղի քայլայման, հեղաշրջման պատկերների հետ (Հ. Թումանյանի «Յերկաթուղու մուտքը»), կան նաև տարբեր հոգեբանության բաղիքումներ, վոր առաջ են գալիս տնտեսական նոր հարաբերությունների շնորհիվ (Ստ. Զորյանի «Յերկաթուղին»): Ապա շեշտվում և գյուղի զարգացման ուղին («Մեքենայով» Ռ. Զաքարյանի) ու բանվորների և գյուղացիների ամուր կապը («Իրողապան Գևոն», Բակունց, «Նորք», № 2) իրեն գլխավոր պայման սոցիալիստական շինարարության:

VII խմբակի նյութի նկատմամբ պետք է ասել հետեւյալը. այստեղ վորոշ խնդիրներ կրկնվում, ամփոփվում, լրացվում են: Անցյալի տիպերը բնութագրելիս (ինտելիգենցիա, մանր արհեստավարություն և այլն) ուշադրություն դարձնել հեղինակի իդեոլոգիայի, նրա դասակարգային պատկանելիության, հակակրությունների ու համաշխատ նյութների վրա (Հ. Թումանյան «Պոետն ու Մուսան», «Վորզի բանվորի»—Զարենց, «Ամբոխն և իմ աշխարհ»—Հ. Հակոբյան): Իրեն նոր նյութ հանդես և բերված ֆինանսական կապիտալի եպօխան (իմպերիալիստական քաղաքականությունը, համաշխարհային պատերազմը, Հոկտեմբերն ու համաշխատ, հեղափոխություն, հեղափոխական գեմքեր, խորհրդային շինարարություն և կապիտալիզմից—կոմմունիզմ): Այսուել խնդիրները՝ հասարակա-քաղաքական և տնտեսական յերեւույթները վերլուծվում են ավելի լայն համաշխարհային մասշտաբով («Ամե-

նապոեմ», «Լենին քեռին»—Զարենցի, «Իլիչ»—Շախնոռ Եպշտեյնի): Խորհրդային շինարարության շրջանի աշխատանքի ու կենցաղային պատկերներին հաջորդում է ապագա հասարակակարգի մտորություն ու յերեակայական աշխարհը՝ իրեն բանվոր դասակարգի վերջնական ձգտում-իդեալը: Ցանկալի յեարտեղ ծանոթացներ Խափիու «Խննթի յերազը» հատվածի հետ բուրժուատագիշի և բանվոր դասակարգի իդեալների հակադրությունը ցուցադրելու համար:

### III

Տալ մեթոդական համառոտ ցուցմունքներ լեզվական բազմապիսի աշխատանքների մասին, կնշանակե տալ վոչ միայն լեզվական հմտությունների մինիմումը, վոր VII-ամյակը հաղորդելու յե իր սաներին, այլ և նրանց մըշակման ուղիները՝ կազմակերպությունը, բնույթը, բովանդակությունն ու մեթոդները:

Լեզվական այս աշխատանքները չպետք է լինեն սոսկ վերացական, անկախ վարժություններ, այլ սերտ կապված զպրոցական ընդհանուր կրթական-հասարակական աշխատանքների հետ:

Դասատուն իր ժամերը այսպես պետք է դասավորի, վոր հնար լինի լեզվական բոլոր աշխատանքները՝ ունակությունների ամրապնդումը, լեզվական վարժությունների յուրացումը, գրական-ստեղծագործական աշխատանքն ու գրականության ուսումնասիրությունը իրենց համապատասխան տեղն ունենան: Իհարկե դասատուն կարող և այս կամ այն մոմենտին հաւտուկ ուշագրություն դարձնել, նայած դասարանի պատրաստության, յերբեք ուշագրության կենտրոնից չհեռացնելով ունակությունների ամրապնդման խճնդիրը, վորովհետև միայն այս հմտություններով զինված գրագետ պատասխնին կարող և ոգտակար-ստեղծագործ աշխատանք կատարել թե գպրոցում և թե կյանքում: Անշուշտ այս աշխատանքները կազմակերպելիս պիտի հեռու մնալ միորինակությունից և գնել այնպիսի ձևերի մեջ (սովորական ամեն մի հանրային գործում), վորպեսզի չթուլանա աշակերտների ակտիվությունն ու հետաքրքրությունը:

Լեզվական աշխատանքները ընթանում են յերկու ուղղությամբ. մեկը նմանողական աշխատանքն և զեղարվեստական հոդվածի ընթերցումով ու վերլուծումով ծանոթանալ ուրիշի փորձին, մաքերին, բանաստեղծական պատկերագոր արտահայտության ձևերին, վոճերին, զարձվածներին, հարստացնելով իր բառապաշտարը. Մյուսը՝ ինքնուրույն ստեղծագործ աշխատանքն և պարզաբանել, խորացնել, ձշտել, հաշվի առնել իր կենսական փորձը սեփական մտքերը, ապրումները և այդ ամենը արտահայտել պարզ, կենդանի, սահուն և ինքնատիպ լեզվով բանավոր և գրավոր:

Բանավոր՝ կենանի խոսքը շատ խոշոր զեր և կատարում նոր գպրոցում: Նրա արտահայտության տարբեր ձևերը, աշխատանքները պետք է կազմին վոչ միայն լեզվի՝ գրականության դասատուի, այլ և ամբողջ զպրոցի գործ: Դպրոցը պետք է վարժեցնի աշակերտներին իր մտքերի անկաշկանդ, գրական արտահայտության (սեփերատ, զեկուցում, քննադատություն, ընդդիմախոսություն): Գրական լեզուն այստեղ մենք շեշտում ենք վորոշ նկատառու-

մով: Հայերեն լեզուն յենթարկված և ոտար աղջեցությունների (թուրքական, վրացական, ռուսական) և գավառական կոպիտ առողջանության: Դրաբոցը պետք է աշխատի այդ անձաշակ, թեև կենդանի և հաճախ պատկերավոր լեզվին հաղորդել գրական կերպարանք:

Բանավոր խոսքի գեղարվեստական ձևերը՝ գեղեցիկ պատմողությունը, բեմադրությունն ու արտասանությունը կայտառ տրամադրություն զարթեցնելու և իրականությունը պատկերացնելու լավագույն միջոցներ են: Բերանացի պատմածքը (հուշ պատմողություն, հորինողական պառամողություն և լսածի ու կարդացածի գեղեցիկ վերաբարպությունը) լավ առողանությամբ, կենդանի շարժումներով ու պատկերավորությամբ հատուկ ուշադրության պիտի արժանանա: Այս աշխատանքների հարուցած խնդիրների արձարձումը, վերլուծումը, գեղեցիկ պատմողության փորձերի հետ կապված, առաջ են բերում մտքի հստակություն, պատկերավորություն և զարգացնում համապատասխան ունակություններ:

Այս կոնցենտրում լուրջ հիմքերի վրա պիտի դրվի աշխատանքը գրքի հետ: Աշակերտները պետք է հաղթահարեն ընթերցանության դժվարությունները (սահունություն, առողանություն, կետադրություն) և վարժվեն քաղելու գրքերից անհրաժեշտ գիտելիքներ, մարդկանց ու կյանքի ըմբռնողության: Դասատուի հանձնարարելի գրքերի ցուցակը սոսկ մի միջոց ե, վոր հեշտացնելու յի և վարժեցնելու յի աշակերտներին գրքեր ընտրելու կարելոր աշխատանքներն: Աշակերտները պետք է ձեռք բերեն բառարաններից, տեղեկատու գրքերից, ժողովածուներից և այլն ինքնուրույնորեն ոգտվելու հրմանավայրություն: Գիրքը՝ իբրև ինքնազարգացման հիմնական աղբյուր, պետք ելինի աշակերտի գիտակցական և ինքնուրույն աշխատանքների կարելոր առարկաներից մեկը, ինչպես զպրոցում, նույնական և տանը:

Գրավոր խոսի վարժություններն ել պիտի ընթանան նույն ստեղծագործ աշխատանքի (այս բառի պարզ ըմբռնումով) հունով:

Այդ աշխատանքների առաջին աստիճանն ե. գրի առնել տեսածն ու լսածը, կազմել պլան հոդվածի, պատմածքի, աշխատանքի նախագիծ, գրքի կոնսպեկտներ, հարցաթերթեր (անկետա), թեզիմներ, այս կամ այն հարցը լուսաբանող քաղվածքների գրություն: Գետք և ոգտագործել նաև պլակատներն ու լոգունգները—իբրև ուսանելի և հետաքրքիր աշխատանքներ:

Համեմատաբար ավելի բարդ աշխատանքներ են. արձանագրություն, գեկուցում, հաշվետվություն, տեղեկագրեր կազմելը, ինչպես նաև ինքնուրույն գեղարվեստական փորձերը (պատմածք, պատկեր, բանաստեղծություն և այլն), այս աշխատանքների հետ պիտի շաղկապվի նաև պատի թերթը, ամսագիրը: Աշակերտները պիտի վարժվեն թերթերի տեխնիկային ու ձևերին (առաջնորդող, խրոնիկա, կենցաղային պատկեր, բանախոսական, նամակ խմբագրության և այլն), իբրև մի աշխատանքի, վոր բղասում և մեր ներկա պայմաններից ու պահանջներից: Մնացած աշխատանքները՝ գրական քննադատություն, ռեցենզիաներ, գիտական մատչելի տեսություններ, վորպես

հասարակաշխաղական ավելի լայն պատրաստություն պահանջող պետք է թողնել վերջին VII-րդ ավարտական դասարանին:

Ծրագրի մեջ վերոշ տեղ է հատկացրած գրականության տեսությանը՝ գրական ձևերի ուսումնասիրությունը: Այս աշխատանքները պետք է կատարվեն գործնական յեղանակով, մատնանշած նյութերի հետ շաղկապված, վինի դա գրվածքի ներքին ատարերը (նկարագրական, պատմողական, դիալոգ) թե նրա հիմնական տեսակները (պոեմ, լեգենդ, բալլագա և այլն) միենալուն ե: Միայն ինկատի պիտի ունենալ մեթոդական հիմնական սկզբունքը՝ պարզից—բարդին անցնելը՝ ոկտելով լեզվի պատկերավորությունից անցնել բանաստեղծական գոճին, գարձագածքին (այլաբանություն, մակղիք, համեմատություն, զիմանություն) և ապա մյուս մասերին:\*) Այս, ինչպես և առհասարակ լեզվական բոլոր աշխատանքները այնպես են տարբում, վոր աշակերտներն իբրենք են յեղակացություններ հանում իբրես դիտողությունների հիման վրա, զասատուի զեկավարությամբ:

Ծրագրի մեջ կարենը տեղ է տված ներախնօտրյան: Սակային քերականությունը վոչ լոգիկական—սխոլաստիկ ըմբռնումով, այլ վորպես լեզվական յերկույթների գիտողությունն, ճիշտ այնպես, ինչպես բնական-հասարակական յերկույթների ուսումնասիրությունն և ըմբռնվում: Աշակերտները նյութերն անցնելիս զիտում են նաև լեզվական այս կամ այն յերեսությը, ապա ամփոփումներ և ընդհանրացումներ անում, մի աշխատանք, վոր անհրաժեշտ և բանավոր և գրավոր կանոնագործ լեզու մշակելու համար: Վ իմբրակում, կրինելով, լրացնելով ու ամփոփելով IV-ում ստացած տեղեկությունները, անցնում են խոսքի քերականական կապին՝ նախադաշտություններին, նրանց կազմության տեսակներին:

Նույն աշխատանքները, կրկնելով ու լրացնելով, շարունակվում են նաև 6-7-րդ խմբակներում: Վեցերորդ խմբակում հատուկ ուշադրության և առնվիլու լեզվի զարգացման որենքները՝ հնչյունների, բառերի նշանակություն, բառերի ձևերի փոփոխությունները կյանքի նոր պայմանների աղեղության տակ (հին ձևերի մնացորդներ, ոտարազգի, նոր կոչման բառեր, գալաքարանություն): Այս աշխատանքները կատարվում են, խոսակցական և գրական լեզվի հին ու նոր ներկայացուցիչների գրվածքների լեզվական առանձնահատկությունները (վոճը, գրձագածքը, նախադաշտությունների ձևը, համաձայնությունը) զիտողության յենթարկելով: 7-րդ խմբակում արդեն սիստեմատիզացիայի յենթարկելով նրանց ձեռք բերած տեղեկությունները, համառոտ գաղափար և տրվում նաև լեզվի ծագման ու զարգացման, փոխադարձ աղղեցությունների և լեզվախմբերի (հնդերոպական, սեմական, հարերական) մասին: Աշակերտները, ծանոթանալով մեր լեզվի բաժանումների հետ (գրաբար, աշխարհաբար, արեկելյան և արևմտյան, զրական լեզու և գալաքարաբաններ), ցայտուն գաղափար են կազմում նաև այն մասին, թե

\*) Այս աշխատանքները ավելի խորացրած և սխոտեմատիկ անցնելու յին 8-9 խմբակներում:

— 10 —

ինչպես սոցիալ-քաղաքական տարբեր պայմաններում մի լեզու ընդունում են այն ձևն ու կառուցվածքը:

Վերջացնելով այս համառոտ ցուցմունքները լեզվի-գրականության դասավորության մասին, հարկավոր ենք համարում մի քանի խոսք ասել նաև ուղղագրության հմտությունների մասին:

Ծնորհիվ մի շարք որիենտիվ և սուբյեկտիվ պահառների (IV ամյակի թերի գիտությունը, վոչ բավարար ուշադրություն այդ խնդրին գլուխոցի և դասաստունների կողմից, դասատունների անբավարար պատրաստությունը այդ հարցում և այն) ուղղագրության ունակությունները դեռևս արմատացած չեն մեր զպրոցականների մեջ: Աշխատանքի այս կողմը ուժեղացնելու համար պետք է ինկատի ունենալ մի քանի մեթոդական ցուցումներ. ուղիղ գրել կարելի չե սովորել միայն գրելով, գործնականապես և վոչ թեորիայով, տեսականապես, ուստի և ուղղագրական կանոնները սոոկ ծառայական, յերկրորդական գեր են կատարում այս աշխատանքներում:

Ունակությունների ամրապնդումը կախված է մի շարք հաջորդական վարժությունների հաճախակի կրկնողություններից: Միայն այս ճանապարհով, միայն մոտորական-տեսողական մտապատճերներն ամրապնդելով, հնարավոր և ուղղագրական ունակություններին տալ ավտոմատիկ բնույթ, վոր կազմում և ամեն մի ունակության եական հատկանիշը:

Ուղղագրական ունակությունները զարգացնելու և ամրապնդելու կարևոր աշխատանքը, անշուշտ, լեզվի և գրականության դասատուի գործն ե, բայց և մյուս առարկաների դասատուներն ել անուշագրության չպետք և մատնեն այս եական խնդիրը. ի պահանջել հարկին նրանք ևս պետք է հետեւն աշակերտի բանավոր և զրավոր լեզվի կանոնավոր, ճիշտ արտահայտությանը, վարքան այդ կապված է իրենց առարկաների հետ:

Միայն այսպիսի միահամուռ և գործոն աշակցությամբ հնարավոր և բարձրացնել աշակերտների հառաջադիմությունը, զրագիտության ընդհանուր մակարդակը այն աստիճանի, վորպիսին անհրաժեշտ և աշխատանքային գլուխոցի և նոր կյանքի սոցիալիստական շինարարության համար:

## Ծ Ր Ա Գ Ի Բ ԼԵԶՎԱԿԱՆ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆԵՐԻ

(Քերականություն)

5 խմբ.

1. Քերականություն.—Կրկնել IV-իմ, անցածը, ապա անցնել գոյական անունների հոլովումները (միացածը): Ածականի և գոյականի դասավորությունը (արձակի և բանաստեղծության մեջ): Բայց՝ բայերի խոնարհումը ներկա, անցյալ, ապառնի ժամանակներով:

Խոսք կամ նախադասություն,—համառոտ և ընդարձակ նախադասություններ և սրանց վերլուծությունը (յենթակա, սառողոցյալ լրացումներ) յենթակայի և ստորոգելի համաձայնությունը: Հին և նոր ուղղագրության արբերությունը:

2. Վարժություններ.—ա) բանավոր խոսքի զարգացում: Մաքուր գրական լեզվով և յերրորդ գեմքով պատմել կարդացածք, համառոտել հոգվածի բովանդակությունը բանավոր: Շարունակել տալ պատմվածքի նյութը ստեղծագործական ընդունակությունները և լեզուն զարգացնելու նպատակով: Բառապաշտարը հարստացնելու և զարգացնելու նպատակով բառերի իմաստը բացատրել և ասել տալ հոմանիշը բառերով:

բ) զրավոր խոսքի զարգացում:—Գրել կարդացածի համառոտ բովանդակությունը: Համառոտել կարդացած հոգվածը.—կազմել կարդացած նյութի կոնսավեկտը:—գրի առնել յուր տապավորությունները ձշությամբ և անմիջականորեն նկարագրական շարադրության ձեռվ:—գեր ածել արձակ զըրվածքը արամախոսության:—կարողանալ գրի առնել հարազատությամբ ժողովրդական ստեղծագործությունները — հերթափնյակ, ավանդություններ, զրույցներ: Գրել ազատ շարադրություններ ցանկացած նույթի մասին:—նկարագրություն հանգեսների, տոնակատարությունների: Գրել գործնական գրություններ (նամակ, արձանագրություն, հայտարարություն, դինում):

6 խմբ.

1. Քերականություն:—Կրկնել V-իմ. անցածը, ապա անցնել կանոնավոր բայերի բոլոր ձևերը: Մակրայ, կապ, շաղկապ, ձայնարկություն: Միխավորյալ սախադասություններ, զլիասոր և յերկրորդական նախադասություններ (ստորագաս խոսքեր) և սրանց վերլուծումը լեզվի ֆակտորների փոփոխությունները (հնչունների, բառերի նշանակությունների, բառերի ձևերի):

2. Վարժություններ.—ա) բանավոր խոսքի զարգացում:—Նախորդ խմբակի վարժությունները ավելի բարդ բնույթով, միջավայր ունենալով քաղաքը գործարան և բանվորական կյանք: Կարողանալ բերանացի համառոտ զեկուցում տալ կոնսավեկտը: Կարողանալ կտրդացած գրքի հիմնավորված գրախոսականը տալ: Գրել ավելի ընդարձակ թղթակցություններ և հոգվածներ դպրոցական թերթի համար:

7 խմբ.

1. Քերականություն:—Կրկնել նախորդը, ապա անցնել՝ անկանոն բայեր, բարդ նախադասություններ և սրանց վերլուծությունը տերմիններով: Բարդ նախադասությունների կետադրությունը:

2. Վարժություններ.—ա) բանավոր խոսքի զարգացում:—V1-իմ-ի վարժությունները ավելի բարդ բնույթով և խորացրած: Գրգածքի գործող անձնությունների հոլովումների հասարակագիտական և լեզվական տեսակետներից: բ) Գրավոր խոսքի զարգացում:—V1-իմ-ի վարժությունները ավելի բարձրացած է անսահման մասին քննադասական, հասարակ և համարկան կամ աշխատանքական ժամանակներով:

ոռու բեցենզիա, ավելի բարդ հոդվածներ: Ույժ տալ ինքնուրույն ստողծագործության:

Ծանոթ. Քերականական տերմինները գործ ածել Մ. Արեգակնար:

## ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

### 5 խմբակ

Գրվածքների առողջանությամբ ընթերցումը համաձայն առողջանության նշանների. Իմաստի (տրամաբանական) շեշտը: Շարադրության կազմությունը և նրա մասերը: Վոճի տեսությունը: Արձակ և չափածո գրվածքներ: Տաղաչափություն:

Գրվածքի գլխավոր իմաստը: Գործող անձանց բնութագիրը համաձայն սոցիալական միջավայրի:

### 6 խմբակ

#### Բանասեղծություն (պոետիկա)

Պրոզա և պոեզիա.

Գրվածքի ներքին տարրերը. Նկարագրական, պատմողական (վիպական) և զատողական, գիրակոգ: Եպիքական և լիրիքական գրվածքներ:

Տրոպների գործածությունը. Այլարանության (մետաֆորա): Մակդիր (եպիտեա), համեմատություն, դիմանություն, պոեմ, լեզենդ, բալլագ, տոակ, առած, համելուկ:

Վեպ. — Վեպիկ, պատմվածք, պատկեր:

### 7 խմբակ

#### Բանասեղծություն (պոետիկա)

Թնարերգություն. — Փողովրդական յերգը և նրա հատկությունները: Կոլեկտիվ և անհատական ստեղծագործություն: Ցերպիծական և յեղերգական քնարերգություն:

Դրամա. — Գրամատիքական ստեղծագործություն. — Նրա կառուցվածքը, հանգույց, գործողության զարգացում, հանգույցի լուծում: Գործող անձանց բնութագիրը, նրանց փոխհարաբերությունը:

(Կրկնութ. — Գրվածքների մեջ գտնել եպիկական, լիրիքական և դրամատիքական հատվածները): Դրամա և կոմեդիա:

Գեղարվեստական գրվածքի բովանդակության, լեզվի և պատկերների կախումը հեղինակի դասակարգային պատկանելությունից:

Համառոտ տեղեկություն լեզվի ծագման և զարգացման մասին:

Լեզվական ընտանիքներ և հայոց լեզվի տեղը այդ ընտանիքներում:

Հայոց լեզվի բաժանումը. — Գրաբար և աշխարհաբար, արևելահայ և արևմտահայ բարբառներ: Գրական լեզու և գավառաբարբառ: Հայոց տառերի գյուղի համառոտ պատմությունը:

Ծանօթարյան. — Գրականվւթյան տեսությունը պետք է անցնել զուտ գործնական յեղանակով, ծրագրում յեղած նյութերի հետ զուգընթաց: Այդ սյութերն անցնելիս աշակերտներն իրենք են յեղակացություններ անում երենց դիտողությունների հիման վրա, դասատուի ղեկավարությամբ:

### ԾՐԱԳԻՐ

## ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

(Թեմաներով յեվ համապատասխան նյութերով)

### V խմբակ

#### I

Կյուղացու աշխատանին ու կենցաղը

(Անհատական յեվ կոլեկտիվ աշխատանին)

- 1) «Սերմնացան» (Աղ. Ծատուրյանի), 2) «Լեռների կարոտը» (Անուշեց), 3) «Իզիթների կոփկը» (Հ. Թումանյանի), 4) «Ծովանը» (Ստ. Զորյանի), 5) «Պատը» (Բլասկո իբանյես), 6) «Քոչը» (Միքարյանի), 7) «Վոչխարի կիթը» (Միքարյանի), 8) «Գարս բիձու շերամապահությունը» (Հ. Թումանյանի):  
Ընթերցանության համար. 1) «Շինականի յերգը» (Ժողովրդ. յերգ «Գրական Գոհարներից»), 2) «Ճախարակը» (Աղայանի «Հայ գրականության» մեջ), 3) «Սերմնացան» (Աղայանի), 4) «Գութանի յերգը» (Հ. Թումանյանի), 5) «Հին որհնություն» (Հ. Թումանյանի), 6) «Անիծած հարսը» (Հ. Թումանյանի):

#### II

Մարդը վօրպես բնուրյան ուժերի դեմ պայմանով

- 1) «Արագը» (Անարոնյանի), 2) «Լոռեցի Սաքոն» (Հ. Թումանյանի), 3) «Մայր հողի ուժը» (Ժարդ. Հ. Թումանյանի):  
Ընթերցանության համար. «Նախնական մարդը»:

#### III

Ժամանակակից գյուղը

(Հոկտեմբերյան հեղափոխություն, խորհրդակից գյուղ)

- 1) «Վլաստը» (Դարրինյանի), 2) «Դեպի բարբիկաղ» (Ժոխ. Գ. Աբովի), 3) «Կարմիր թմբկահարը» (Ըստ Եղ. դ-Ամիչիսի), 4) «Մոտիկ անցյալից» (Արոսովի), 5) «Հոկտեմբերի» (Վ. Կիրիլլովի):  
Ընթերցանության համար. 1) «Թագավորի դեմ» (Կրավչինսկի), 2) «Շիրկանալը» (Հ. Հակոբյանի):

IV

Գյուղին անցյալում

(Ճորտափրյուն, գյուղացիների յեվ կալվածաերերի փոխարարերությունները,  
գյուղացու պայմանների աշխատանքի ազատագրման համար)

- 1) «Մշակ Մհերի բողոքը» (Ազ. Իսահակյանի), 2) «Քյուրդ Զասրմի  
պատմությունը» (Լաղո), 3) «Մհերի բերդը» (Ազ. Իսահակյանի), 4) «Ամրոցը»  
(Դարբինյանի), 5) «Վիճելմ Տելլ» (Տելլ), 6) «Լեհ պաների յերկրում» (Գոլի. Դ. Դ.),  
7) «Աղա Բարաթովի դատը» (Գոլի. Դ. Դ.), 8) «Հրաման» (Նինոշվիլի),  
9) «Տ. Թողիկի դպրոցը» (Բաֆֆի):

Հնիթերցանության համար. 1) «Թափաղի առողջան» (Կ. Արև. V ա. առ.՝),  
2) «Մի որավար հող» (Կ. Արև. VI ա. 24 թ. հրատ.), 3) «Կալվածատերն  
ու Լորդը» (Կ. Արև. VII ա. 24 թ. հրատ.), 4) «Պարլամենտի անդամը» (Կ. Ար.  
VII ա. 26 թ. հրատ.), 5) «Ծեծել և կաշարել» (Կ. Արև. VII ա. 26 թ. հրատ.),  
6) «Աչքածակ գայլը» (Կ. Արև. VII ա. 26 թ. հրատ.), 7) «Մումու» (Կ. Արև.  
VII ա. 24 թ. հրատ.), 8) «Լուր դա լուր» (Կ. Արև. VII ա. առ.), 9) «Սասունցի  
Դավիթ» (Հ. Թումանյանի), 10) «Յերգչի անեծքը» (Թարգ. Հ. Հովհաննի-  
յանի):

V

Առեվտրական կապիտալի մուտքի

(Գյուղի օհրավորումը)

- 1) «Շաշ Պետին ու գիծ Ոհանը» (Ճուղուրյանի), 2) «Ելեքտրական  
լամպը), 3) «Ուստա կարոն և գյումըցի վաճառականները» (Ազ. Իսահա-  
կյանի), 4) «Կովախնձորը» (Արագիի):

Հնիթերցանության համար. 1) «Մագտայի իշուկը» (Յեկ. Գաբաշվիլի),  
2) «Միկիտան Սաքոն» (Պ. Պոռշյանի), 3) «Պալասան աղան» (Պոռշյանի  
Յեցերից):

- 1) Ազատ ընթերցանության համար. 1) «Տորք Անգեղ» (Դ. Աղայանի),  
2) «Հատիկ» (Հ. Հովհաննիսյանի), 3) «Արություն և Մանվել» (Դ. Աղայանի),  
4) «Իմ կյանքի զլխավոր դեպքերը» (Հատվածներ Դ. Աղայանի):

- 1) Դասագիրք՝ «Կարմիր Արև. V ա. 1926 թ.—Ս. Հակոբյանի կամ  
2) Դասագիրք՝ «Կարմիր Արև. V ա.» 1925 թ. հրատ.—Սուրխաթյանի:

Ծանրություն.—Յեթե դասարանն արգեն ձեռք և բերել «Կարմիր  
Արևի» (V ա.) 1926 թ. հրատարակությունը—պետք է ոգտվեն հետեւալ  
հոգվածներից (դասավորում հնք ըստ թեմաների):

I

Գյուղացու աշխատանքն ու կենցաղը

1. «Բարեկենդանը Քանաքեռում»
2. «Միծ նանը»
3. «Տորք Անգեղ»—Դ. Աղայանի
4. «Հայ բոշաները վրասաններում»

5. «Տանուտեր Խաչոյի ընտանիքը»

6. «Հասոն»

III

Ժամանակակից գյուղը

(«Կարմիր Արև» V ա.—Ս. Հակոբյանի 339—402—)

1. «Թանջիր» Ակսելի

2. «Պայքարող Մարոն»

3. «Վախը» Արագի

4. «Տաշքենդ հացի քաղաք»

IV և V

Գյուղի անցյալը յեվ առեվտրական կապիտալի մուտքը

1. «Խաթունի արտը» Աջապյան

2. «Արտը»—Վ. Փափաղյան

3. «Բեռի Գոգորը»—Ա. Շահնազարյան

4. «Մոսինի դպրոցը»—Մուրացանի

5. «Կովախնձորը»—Արագի

6. «Գյուղացի Ավետը և քաղաքի վաշխառուն»—Բաֆֆի

7. «Յերկաթուղու մուտքը մեր ձորերը»—Հ. Թումանյան

8. «Յանկապատը»—Ս. Զորյանի

9. «Արությունի պայքարը հնի դեմ»—Դ. Ար.

10. «Մհերի Կովը»—Ազ. Իս.

11. «Փոքրիկ պահակը»—Արագի

12. «Խաս Գուշ»—Բաֆֆի:

VI Խմբակ

I

Քաղաքը փորպես արդյունաբերական կենտրոն ներկայում յեվ անցյալում

1) Քաղաքը, չափածո—Հ. Հակոբյանի, 2) Ամերիկայում—Շիրվանզագե,

3) Մանվածագործարանում—Վ. Ռեյմոնտ, 4) Նավթաշխարհ—Շիրվանզագե,

6) Սկ քաղաքում—Միք. Մանվելյան:

Հնիթերցանություն. Քաղաքը, չափածո—Ա. Գուցեկչին

II

Քանվարի աշխատանքը յեվ կենցաղը ներկայում յեվ անցյալում

1) Մեքենավարի հիշատակարանից—Ս. Գետրոսյան, 2) Անբաժիններ

(Ախ մեր սիրտը...)—Ազ. Իսահակյան, 3) Գործարան, չափածո—Հ. Հակո-

բյան, 4) Արտիստ—Շիրվանզագե, 5) Խեցի նավթաշխարհը—Շիրվանզագե,

6) Պանդուխտ—Լեռ, 7) Քսան որ հանքերի խավարում—Շ. Մելիք Հայկ-

յան, 8) Հրդեհ նավթահանքում—Շիրվանզագե, 9) Շապկի յերգը—Թումա-

նուգ, 10) Բանվորների յերեխաները—Միքրո, 11) Բանվորունու մանկու-

թյունը—Ա. Զեխով, 12) Հացի տեղ գնդակ—Եմիլ Զոլա:

## VII-րդ խմբակ

1. Սոցիալական փոխարարեաւությունները կապիտալիզմի գործացման օրշանում (Քանվոր, գյուղացի, մանր արհեստավոր, ինտելիգենցիա, առևտուրա-արդյունաբերական բուրժուազիա)

1) «Միլիարդերն ու բանվորները»— Սինկլիրի, «Կարմիր Արև Արատ., 2) «Յերկաթի կրունկը» Զեկ Լոնդոնի «Կարմիր Արև» 2-րդ հրատ., 3) «Ծերունու հառաջանքը» Հով. Թումանյանի, «Կ. Արև» 2-րդ հրատ., 4) «Սարալու» Ակսել-Բակուն, «Կ. Արև» 2-րդ հրատ., 5) «Մարկոս Ալիմյան» Շիրվանզադե, 6) «Բանկիր» Ե. Վերհարն, 7) «Թալազի առողջան» Ի. Ճավաճական, 8) «Աչքածակ գայլը» Ա. Ծերեթելի, 9) «Դժոխված և քառու» Շիրվանզադե, 10) «Ամիրա» Ա. Պատկանյան, 11) «Պեպո» Կ. Արև ՎII 1 հրատ. կամ Սուրբաթյանի «Հայ գրական. I հատ., 12) «Մեծավատիվ Մարտացկաններ» Շիրվ. (Քառոյց) 13) «Ծնկերը» Ավ. Խոսհակյանի, 14) «Պոյետն ու Մուղան» Հ. Թում., 15) «Յերկիր Նայերի», 16) «Մարտուն ուխտ գնաց» Նար-Դոս, 17) «Ինչպես բժշկեցին»: Նույնը:

## 2. Քինանական կապիտալիզմի օրշանը

(Իմպերիալիստական քաղաքականությունը, պատկերներ իմպերիալիստական պատերազմից, հոկտեմբերյան և համաշխարհային հեղափոխությունը, հեղափոխական դեմքեր:

1) «Պատերազմը» Ստ. Զորյանի, «Կարմիր Արև ՎII տ. I հր., 2) «Ամենապոեմ» Յե. Զարենց 3) «Բաջ Նազարը» Դ. Յեմիրջյանի 4) «Դեպի հաղթանակ» Յե. Զարենց «Կ. Արև» ՎII տ. II հր., 5) Հաղթության ճանապարհին Ռիդ «Կարմիր Արև» II հրատ. «Մինչև հազարերորդ սերունդը» «Նոյեմբերի 9-ը», «Կարապի յերգը» Արագի, «Ալիչ» Շախտ Եպշտեյն, «Անին քեռին» Յե. Զարենց, «Մարքոս ընտանիքում», «Միրտղ վորպես վառարուշն»

## 3. Խորհրդակին օբյեկտությունը յիշ նրա արտացոլումը գրականության մեջ

«Կենցաղ հինը» Դ. Դեմիրջյանի «Շիրակի ջրանցքը» Ստ. Զորյանի, «Բալեկիկ և Շիրկանալը» Հակոբյանի, «Կայան առ կայան» Վեսպերի, «Քիր Մաթոն» Ս. Մելիքսեթյանի:

## 4. Կապիտալիզմից կոմմունիզմից

«Դեպի ապագան» Զարենց, «Հավասարություն» Հակոբյան, «Ապագա դարերում» Զարենց, «Բրոնզի թերը կարմիր գալիքի», «Համայնականների հասարակության մեջ» Ան. Ֆրանս, «Ինչ են մտածում նրանք սոցիալիզմի մասին»:



Հնթերցանություն. 1) Հանքափորներ—վ. Վոլքինշտեյն, 2) Կապիտալիստ աշխարհում—Ռւպտ. Սինկլիր, 3) Զանքը, չափածո—Եմիլ Վերնհարն, 4) Պղնձահանքի անցյալից—Նիկ. Մամիկոնյանի, 5) Խառնակիչը, 6) Զուգունի և յերկաթի թագավորություն մեջ—Նեմերովիչ-Դանչենկո, 7) Գետնի տակ—Ա. Սերաֆիմովիչ, 8) Հեռախոսի կայարանը, 9) Փարիզ և Լոնդոն—Գրիգոր Ռույան:

## III

Կոլիկ աշխատանիքի ազատազրման համար

ա) Սոցիալական փոխարարեաւությունները կապիտալի գարգացման բրացեամ  
1) Վիշապ—վ. Փափազյանի, 2) Մոտիկ անցյալից—Նար-Դոս, 3) Բանվորունու որորը, չափածո—Ա. Ծատուրյան, 4) Փողոցում—Ա. Ահարոնյան, 5) Հանգյրեք ջաները—Շ. Կուրդինյան, 6) Խավարում, չափածո—Վիկոնտ Հյուկո, 7) Զիմմի Հիգենս—Սինկլիր, 8) Գոգիս Ռեխվիլի—Նինոշվիլի:

Հնթերցանություն. 1) Ծեծը—Սինեգուր, 2) Վերա Զասուլիչի հիշողություններից, 3) Միլիարդներն ու բանվորը—Սինկլիր, 4) Սայիդ և Ադինտա—Մութաթուլիմի, 5) Անհավասր կոիկը, 6) Դավիթ Լիվինզատոն

բ) Հեղափոխական օւրժուածներ—Պարիզի կոմմունա, Մայիս 1, 1905 թիվ վել Հոկտեմբեր

1) Ուղղարկում եմ քեզ այս զլուխը—Արագի, 2) Բարրիկադի վրա—Վիկոնտ Հյուկու, 3) Յետ տար քո խաչը—Շ. Կուրդինյան, 4) Հունվարի ինսոր—Մմկնիմ Գորկի, 5) Ապատամբություն—Լևոն Աթարեցյան, 6) Հեղափոխություն—Հ. Հակոբյան, 7) Լենինն ու Ալին—Յեղիշե Զարենց:

Հնթերցանություն. 1) Պարիզի կոմմունան—Արագի, 2) Ծխամորձը—Ի. Երենբուրգի, 3) Ռումբերի պատասխանը—Արտյոմ Գիյո, 4) Հաղթական մայիս—Կուրտ Այսներ.

## VI

Գյուղի յիշ բաղադր փոխարարեաւություն (կապը)

ա) Կյուլք վարպետ հում նյուր մատակարառ

1) Կարկուտը—Հով. Մալիսայանի «Կարմիր արև» VII տ. նոր տիպ, 2) Մի որավար հող—Բաֆֆի «Կարմիր արև» VII տ. հին տիպ, 3) Մագդալի իշուկը—Յեկ. Գաբրաչիլի «Կարմիր արև» V տ. 24 թ. տիպ:  
բ) Կյուլք հետեւություն բացուածություն

1) Շեցարական գյուղը—Ա. Ահարոնյան, 2) Յերկաթուղին—Ստ. Զորյան «Կարմիր արև» VII տ. հին տիպ, 3) Յերկաթուղու մուտքը—Հ. Թումանյան, 4) Մեքենայով—Տեր Զաքարյանի «Կարմիր արև» VII տ. նոր տիպ:

Հնթերցանություն. 1) Կոռպերացիան գյուղում—վ. Ա. Պոնոֆիդի, թարգմ. Աթայանի, 2) Կոռպերացիան և գյուղատնտեսություն—Մախով, թարգմ. վ. Փոթեյանի, 3) Դրոկապան Գեվոն—Բակունց «Նորք» ամսագիր և 2:

Ազատ ընթերցանություն. 1) Փարվանա—Հով. Թումանյան, 2) Նոյի ագուալը—Մուրացան, 3) Արագ—Նար-Դոս:  
«Կարմիր արև» VII տարի նոր տպագրություն):

## ԳԱՄՅԱԿ

### ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ

Գրականությունը հանդիսանում է տվյալ հասարակակարգի սոցիալ-տնտեսական հարաբերությունների արտահայտությունը, արտադրական ուժերի իդեոլոգիական վերնաշենքը։ Գրական ստեղծագործությունն անդրադարձնելով իր մեջ տվյալ շրջանի հասարակական խավերի կամ դասակարգերի փոխարաբերությունները, կոլլեկտիվ ու անհատական հոգեբանությունն և կենցաղը, չի կարող անջատ ու անկախ, իբրև առանձին կտրված յերեւույթ կամ առարկա ավանդվել մեր աշխատանքային դպրոցներում։ Գրականության զարդարումն ել կապված է սոցիալտնտեսական յերեւութների զարգացման հետ։ Գրականության դասատլությունը պետք է գուգընթաց տարվի հասարակության սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության հետ ու ըղին նրանից։ Գրականության դասատուն ել ուսումնասիրում է հասարակական կյանքի այս կամ այն յերեւույթը, ինչպես հասարակագեար, բայց վերջինս գլխավորապես կանգ և առնում հասարակության տնտեսության ու քաղաքականության վրա, իսկ գրականագետը՝ կենցաղի ու հոգեբանության։ Ուստի գրականության դասատվությունն անմիջականորեն, ըստ հնարավորության, պետք է կապված լինի հասարակագիտության դասընթացի հետ, սակայն մի հանգամանք ևս պետք է ինկատի ունենալ վոր գրականությունը միայն հասարակական յերեւութների իլլուստրացիայի համար չե, նա ծառայական գերում չպետք է լինի. գրականությանն ել ունի իր ինքնուրույն նպատակները ու ինքիրները։ Զամյակում արդեն պետք է անցնել գրականության սիստեմատիկ դասընթացը։ Գրականության նյութը դասավորելիս մենք ենք ընդունել հասարակության տնտեսական զարգացման գարերը, սկսած նախնական շրջանից մինչև ֆինանսական կապիտալի զարգացումը ապա հոկտեմբերյան հեղափոխությունը, բանվորական դիկտատուրան ու սոցիալիստական շինարարությունը։ Այս ամբողջ դասընթացը բաժանված է յերկու խմբակի մեջ։ Ժողովրդական գրականությունը մինչև առետրական կապիտալի զարգացումը (Սունդուկյան) ավանդվելու յե 8-րդ խմբակում, իսկ 9-րդ խմբակում՝ առետրական կապիտալի զարգացումից (Սունդուկյանից) մինչև սոցիալիստական շինարարությունը, այսինքն մեր ըրերը։

Գրական յերկերի վերլուծման միակ ուղիղ մեթոդը պետք է համարել մարքսիստական-սոցիալիստական մոտեցումը։ Այս ճանապարհով միայն գրականության դասատուն կարող է ճշշտ կերպով հասկանալ ու պարզել հեղինակի մտածողությունը, աշխարհահայցքը և նրա գրական ստեղծագործությունը։

Հին և միջին դարերի գրականության պատմությունը, մինչև առետրական կապիտալի առաջնալը (մինչև Խ. Արովյան) պիտի անցնել դարաշրջանների ընդհանուր բնութագրումներով, շեշտելով ամեն մի դարի գրա-

կանության վոգին, բովանդակությունը, ուղղությունը, այդ դարաշրջանը պատկերացնող հեղինակի ստեղծագործության բնույթը։ Այս շրջտնների վրա պետք է կանգ առնել մաքսիմում յերկու ամիս։

Այս շրջանում գրականության դասատուն պիտի պարզի տնտեսական ու կուլտուրական ուժեղ ժողովրդների գրականության աղղեցությունը հայ գրականության վրա, ինչպես նաև այն ուժեղ կապը, վոր կա տվյալ հասարակարգի և յուր դարն արտահայտող հեղինակի հայացքների միջև, ինչպես որինակ. նահապետական շրջանում զյուցազնական յերգ, ստրկատիրական տնտեսության շրջանում եպոս և այլն։ Առանձնապես պետք շեշտել գրականության դասակարգային բնույթը և տիրապետող դասակարգի նյութական ու հոգեկան շահերին ծառայելու հանգամանքը (հայկական ֆեոդալիզմ և Մ. Խորենացի, Յեղիշե-գեղագիւղական-նախարարական այս կամ այն տան պատմիչներ) հին և միջին դարերի կրոնական վոգին և գրականության կրոնական-հոգեկոր բնույթն ու բովանդակությունը։ Մէջնադարյան քնարերգներից պիտի հիշատակել առանձնապես միայն Ֆրիկը, Քուչակ նահապետը իսկ աշուղականից Սայաթ-Նովան։ Միջնարգարյան գրականության ավանդման ընթացքում հատուկ ուշագրություն գարձնել մեր հին լեզվի զարգացման վրա մինչև մեր որերը՝ գրաբար, ռամկական աշխարհաբար (միջին դարերում) և գրական լեզու՝ արեելյան ու արեմտյան։

Խ. Արովյանից սկսած առանձնապես ուշագրություն դարձնել հասարակության շերտավորման ու տնտեսական կյանքի փոփոխման վրա և շեշտել թե ինչ չափով և ինչ թափով այս կամ այն զարաշրջանի տնտեսական կյանքը անդրադարձել և գրականության և հեղինակի աշխարհուհայացքի վրա (Խտ, նաղարյան, Մ. Նալբանդյան վերածնության շրջանի գործիչներ)։ Շեշտել ու պարզել, թե առետրական կապիտալի մուտքը մեր կյանքում ինչ փոփոխություններ մտցրեց զյուղական անտեսության ու իդեոլոգիայի մեջ (Պ. Պոռյան, Ղ. Աղայան)։ Կյանքի և գրականության զուգահեռ ավելի ևս խորացնել 60—70 ական և հետագա շրջաններում և ցուց տալ թե ինչպես տնտեսական և հասարակական կյանքի փոփոխման հետ միասին փոխվում է գրականությունը և թե ինչպես առաջն գալիս գրականության նոր սեռերը և նոր ուղղությունները (Դրամա՝ Սունդուկյան, ռեալիստական վեպ՝ Շիրվանզադե, Նար-Դոս)։

Մոտենալով արդյունաբերական կապիտալիզմի զարգացման շրջանին՝ 1905 թ. մանավանդ Հոկտեմբերյան հեղափոխությանը՝ 1917 թ. հատուկ շեշտել նոր սոցիալիստական—կոմմունիստական գաղափարների մուտքը մեր իրականության մեջ, նրա առաջ քերած հեղաշրջումը հին հասկացողությունների մեջ, նոր կյանքի կերտումը և այն ուղիները, վորոնք առաջնորդում են դեպի սոցիալիզմ—կոմմունիզմ և ցուց տալ գրականության ստեղծագործության միջոցով այդ զարգափարներն իրականացնելու ուղիները։ Կանգ առնելով պրոլետարական գրականության ծագման առանձնահատկությունների և գլխավոր ներկայացուցիչների վրա։ Գեղարվեստական ստեղծագործությունը պիտի ոգտագործել նաև վորոնք դաստիարակության միջոց։ Ա-

ոանձնապես պետք և ուշադրություն դարձնել այնպիսի ստեղծագործությունների վրա, փորոնք կարողանան աշակերտների մեջ առաջացնել գեղարվեստական եմոցիաներ, ճեղափոխական տրամադրություն, ձգտում դեպի գեղեցիկը, համամարդկայինը իրեկ պրոլետարիատի իդեալ: Գրականության ուսուցման նպատակներից մեկն եւ պիտի լինի գեղարվեստական ընտիր համաձների միջոցով զարգացնել աշակերտների մեջ մայրենի լեզվի գեղեցկությունները նրա պատկերավորությունները, վեհն ըմբռնելու ընդունակությունները, փորով հնարավորություն կը տրվի աշակերտներին գործնական կյանքում պատկերավոր, կանոնավոր, գեղեցիկ և տրամարանորեն արտահայտելու իրենց մտքերն ու զգացմունքները: Նոյն պահանջները պիտի անել նաև գրավոր աշխատանքների նկատմամբ:

Վերոհիշյալ նպատակին համեմ էլու համար, մանավանդ այս անցման շրջանում, յերբ 9 ամյակ ավարտողները կանոնավոր գրել-կարգալ չգիտեն, 8-րդ և 9-րդ խմբակներում անհրաժեշտ ե գրականության հետ զուգընթաց ուշադրություն դարձնել լեզվի ուսուցման վրա:

Գրականության նյութն անցնելիս հատուկ ուշադրություն դարձնել փորակի և փոչ քանակի վրա. սակայն չափազանց չտարրի ու մոռացության չըտալ անցնելիք նյութի ծավալը: 7 ամյակում անցած գրական տեսությունն այս դասարաններում ավելի խորացվում և լրացվում է: Գրական ուղղություններն անցնելիս ուսուցիչ ոգովում ե աշակերտների ունեցած ծանոթությունից ոսւս և յերրոպական հեղինակների մասին, հակառակ դնուքում, յեթե ծանոթ չեն, ուսուցիչը համառոտ տեղեկություն և տալիս գրական ուղղության տիպիկ ներկայացների մասին փորով ավելի ե պարզաբանվում այն կապն ու ազգեցությունը, փոր գոյություն ունի ընդհանուր և հայ գրականության մեջ: Առանձնապես ընդգծել, փոր հայոց գրականությունը, ինչպես առնասարակ փորեւ գրականություն, առանձնացած, կզզիացաց գոյություն չունի, այլ կազմում ե ընդհանուր գրականության մի ողակը:

Աշակերտների ինքնուրույնությունն ու ստեղծակործական ընդունակությունները զարգացնելու համար անհրաժեշտ ե, ըստ հնարավորության, լայն տեղ տալ հետախուզական աշխատանքներին: Աշակերտներին առաջարկել անմիջական աղբյուրները՝ յերկերը, նրանց քննադատություններն ու ուսումնասիրությունները կարգալ, կազմել ուժիքրատներ, զեկուցութիւններ, գրական դասեր և գիտկութիւններ:

## ԾՐԱԳԻՐ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՅԵՎ ԼԵԶՎԻ

8 խմբակ

1. Ներածություն.—Գիտություն և գեղարվեստ, գեղարվեստի 5 ճյուղերը: Գրականության բաժանումը՝ բանավոր-ժողովրդական և գրավոր: Լեզվի ծագումը և զարգացումը:

2. Ժողովրդական ստեղծագործության և սեսակները: Նախնական շրջան՝ զիցարանական յերգ: Նահապետական-տոհմական շրջան՝ զիցարանական յերգ (զուգընթացար տանը կարգալու համար «Գրական գոհարներ»-ից՝ Մ. Խորենացու «Վահագնի ծնունդը», Հ. Հովհաննիսյանի «Վահագնի ծընունդը», Դ. Աղայանի «Տորք Անգեղը»), առասպել, հեքիաթ (տանը կարգալու համար՝ Հ. Թումանյանի «Քաջ Նազար»-ը): Ժողովրդական քնարերգություն՝ սիրո, աշխատանքի, բնության, պանդիտի յերգեր (տանը կարգալու համար «Գրական գոհարներ»-ից նման յերգեր):

3. Ստրկաժիրական և նետսություն: Եպոս, հունական և պոս (զուգընթացար տանը կարգալու համար Հոմերոսից կտորներ «Գրակ. գոհարներ»-ից): Հայկական և պոս՝ «Սասունցի Դավիթ»:

4. Ֆեոդալիզմ: (Ընդհանուր ակնարկ արևելյան և արևմտյան կուլտուրաների ազգեցության մասին հայ կյանքի վրա. քրիստոնեյություն և նրա մուտքը Հայաստան): Հայկական ֆեոդալիզմ՝ նախարարներ, թագավորներ, հոգեորականություն. տառերի գյուղը և Վ-րդ զարի մտավոր-կուլտուրական շարժումը (վոսկե գար): Գրականության գասակարգային և հոգեոր բնույթը (Մ. Խորենացի, Յեղիշե, իրեկ ֆեոդալական-իշխանական տների պատմագիրներ):

Ընդհանուր տեսություն VI—XII-րդ դարերի հայերի կուլտուրական-քաղաքական զրության մասին:

5. Միջնադարյան հնարեգություն: Ֆրիկ, Քուչակ և նահապետ. սրանց քնարի բնույթն ու յերգի մոտիվները: Արևելյան բանաստեղծության ազգեցությունը սրանց վրա: Սրանց լեզուն:

6. Առուղական գրականություն: Սայաթ Նովա, սրա քնարի բնույթը և ստեղծագործության բովանդակությունը:

Քաղաքական կյանքը XVI—XVIII-րդ դարերում: Հայկական տպագրություն, գրաբարի և աշխարհաբարի գրությունը: Միիթարյանները և նրանց գրական գործունեյությունը:

7. Քաղաքական կյանքը XVIII յեկ XIX-րդ դարի առաջին հառորդին: Հայ լեզվի յերկու ճյուղերի բաժանվելը (արևելյան և արևմտյան): Հարությունը վ. Ալամդարյան, Մհերոբ Թաղիադյան:

8. Ֆեոդալիզմի հայեակումը, բաղակների կազմակերպվելը յեկ առելքրական կապիտալի առաջանալը: Խ. Արովյան (1804—1848). հայ կյանքի սոց.

տնտես. դրությունը **XIX-րդ** դարի I-ին քառորդին: Բնատնտեսություն և փոխանակման տնտեսություն:

Խ. Աբովյանի կյանքն ու գրական-մանկավարժական գործունեյությունը: «Վերք Հայաստանի», նրա արժեքը սոցիալ-գրական տեսակետից: Արովյանի լեզուն և վոճակը: Աբովյանի նշանակությունը մեր գրականության մեջ:

9. Առելիքական-վաշչառուական կապիտալի զարգացման I-ին շրջանը.—

Պ. Պուշչան (1837—1907).—Գյուղի նոր խավերը. հին հասկացողությունների հեղաշրջումը և մասր բուրժուական հասկացողությունների և գաղափարների մուտքը գյուղում: Պ. Պուշչան. նրա ստեղծագործության արժեքը—«Հացի խնդիր» և «Յեցեր» վեպերն ու նրանց սոցիալ-գրական վերլուծությունը:

Դ. Սպայան.—Հնի և նորի կոիվը: «Հարություն և Մանուել». սրա հասարական-գրական արժեքը. «Բաժանություն»:

9. Առելիքական կապիտալի զարգացման II-րդ շրջանը յեվ նայ բուրժուակայի կազմակերպվելը.—Նրա իդեոլոգիան՝ լիբերալիզմ. վերածնության շրջանի հրապարակախոս ներկայացուցիչները—Ստ. Նազարյան և Միք. Նալբանդյան:

Հասարակական մտքի զարգացումը Յելլոպաշյում և Ռուսաստանում, յելլոպական գաղափարների մուտքը մեջ:

«Հյուսիսափայլ» և վերածնիչներ—Ստ. Նազարյան, Մ. Նալբանդյան, սրանց սոցիալական դավանանքի բնույթը (բուրժուական իդեոլոգներ): նայ վերածնիչների բարենորոգչական ծրագիրը: Մ. Նալբանդյանի ազատասիրական բանաստեղծությունները:

Վերածնության շրջանի բանասեղծ ներկայացուցիչներ՝ Սմբ. Շահազիզ յեվ Գտմառ-Քաքիսաւառ. — Սմբ. Շահազիզի ստեղծագործությունների բնույթը (հրապարակախոսական). «Լևոնի վիշտը». Ս. Շահազիզի կրած ապրեցությունները (Բայրոն, Պուշկին): Գամառ Քաթիպա. — Դեմոկրատական նացիոնալիզմը Գամառ Քաթիպայի բանաստեղծությունների մեջ: Տաճկահայ կյանքն ու հարցը Գ. Ք.-ի ստեղծագործությունների մեջ: Արեւլյան հարց. Գամ. Քաթիպայի մարտական նացիոնալիզմը: Գ. Ք.-ի վիպական պատմվածքների ընդհանուր բնույթն ու լեզուն:

## 9 խմբակ

1. Առելիքական կապիտալի զարգացումը Ռուսաստանում յեվ նայ բուրժուական.—ա) Հիսունական թվականների հայ գրական վերածնության ընդհանուր բնույթը: Թատրոնը հայերի մեջ: 60-ական թվականների հայ բուրժուական Անդրկովկասում: Թիֆլիսի առելիքականությունը. համբյարությունը:

Պատմական դրամա և կենցաղագրական կոմեդիա:

Դաբրիել Սունդուկյան—բուրժուական ընտանիքը և աշխարհայացքը («Խաթաբալա»): Հին ու նոր սերնդի պայքարը («Ելի մեկ զոհ»): Տարբեր խավերի մրցումը և մրցման հետևանքները («Քանզիվ ոջախ»): Դասակարգային պայքարի բնույթը այդ շրջանում («Պետո»):

բ) Լիբերալիզմը 70-ական թվականներին: Գրիգոր Արծրունի և «Մշակ» լրագիրը:

Ռուս-թյուրաքան պատերազմը. բալկանյան ազգերի ազատագրումը և «Հայկական հարցը» (16-րդ և 61-րդ հոդվածները):

գ) Ազգայնական գրականություն և ոռմանափակման:

Տաֆֆի. — Տենդենցը վեպի մեջ (կրկնել Ռ. Պատկանյանը և նրա «Ազատ յերգեր»-ը):

Մատավոր հոսանքներ—«Մշակ», «Մելու» («Նոր-Դար») և «Արձագանք»:

Հ. Պարոնյան—«Ազգային ջոջեր», «Մեծապատիլ մուրացկաններ» և «Հոսոսի ձեռատերը»:

2. Արդյունաբերական կապիտալ յեվ պրոլետարիատի կազմակերպումը. 80-ական և 90-ական թվականները: Յերեք կենտրոններ՝ Բագու, Թիֆլիս և Բաթում:

ա) Ռեալիզմը հայ գրականության մեջ:

Շիրվանզագե—«Նամուս», «Բառ», «Պատվի համար»:

Նար-Դոս—«Մահը», Մանը յերկերը («Մեր թաղը»)—Նատուրալիզմ:

բ) Ռեալիզմը արևմտահայ գրականության մեջ. — Գրիգոր Զոհրաբ՝ «Կյանքը ինչպես վոր կա»:

3. Կապիտալի ազգեցուրյունը գյուղի վրա. գյուղի բայխալում յեվ դիմերենիցիացիան:

Մուրացան—«Նոյի ագռավը», Առաքյալը», «Խորհրդավոր Միանձնուհի»:

Հովհ. Թումանյան:

Դյուզագրությունը Պուշչանից հետո—Ազապյան, Ճուղուրյան և այլն:

բ) Ազգային և անհատական քնարերգությունը այդ թվականներին—Ա. Շատրոնյան, Հ. Հովհաննիսյան:

գ) Ազգային ուղղությունը 90-ական թվականներից հետո—Ա. Ահարոնյան՝ պատկերները:

Ա. Արփիարյան՝ «Կարմիր ժամուց»:

Վրթանես Փափազյան:

Նիշշեական գծերը հայ գրականության մեջ—Ա. Իսահակյան՝ «Աբուլա-Մահարի»:

դ) Սիմվոլիզմ—Շանթ՝ «Հին աստվածներ», Սիամանթո, Դ. Վարուժան:

4. Պրոլետարիատի կազմակերպումը յեվ 1905 թ. նեղափոխությունը: Հակոբ Հակոբյան և Շ. Կուրդինյան:

Մարքսիստական քննադատություն—Ստ. Շահումյան, Ա. Մյասնիկյան, Կարինյան, Սուրբաթյան և այլն:

Քնարերգությունն այդ շրջանում—Ղանան Տերյան, Մ. Մեծարենց (համառոտ ծանոթություն):

5. Հակեմբերյան Հեղափոխություն:

ա) Ազգային ուղղության անկումը—գյուղը և քաղաքի պրոլետարիատը գրականության մեջ:

Ստ. Զորյան:

- բ) Ֆռուտուրիզմը:  
դ) Պրոլետարականություն:  
Եղիշե Զարհնց:

Ծանոթություններ 1. — Քննադատների մասին ծանոթություն պիտի  
տալ հեղինակներին անցնելիս և կապել այն հեղինակի ու շրջանի հետ,  
վորք դարձել և քննադատության նյութ տվյալ քննադատի համար:

2. — Յերբ խոսք ե լինում գրական ուղղությունների մասին,  
պիտք ե հիշել համաշխարհային գրականության մեջ այդ ուղղության  
ներկայացուցիչներին և առհասարակ պարզել հայ հեղինակների կրած  
ազգեցությունը յեվրոպական և ռուս հեղինակներից:

3. — Սոցիալ-տնտեսական միջավայրը բնորոշելիս նույնպես կա-  
պել ռուսական և յեվրոպական միջավայրերին և վորոշել ազգեցու-  
թյունը:



ՀՀ Ազգային գրադարան



NL0243448

